ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ
№ 21

ՏԱՐԵԿԱՆ
ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆԷ

Թաւրիզում . . . . . 14 դրան
Գաւառներում . . . . . 20 դրան

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

Ռուսաստան . . . . . 4 ռբ. 50 կ.
Թուրքիա . . . . . 50 դրուշ
Եւրոպա . . . . . 12 ֆրանկ
Ամերիկա . . . . . 2 տոլար 5 ս.

Յայտարարութիւնների վճարը
Առաջին երեսում տողատեղը 10 շահի
Չորրորդ „ „ „ 5 „

ԱՌԱՆՁԻՆ ՀԱՄԱՐը 9 շահի

Խմբագրութեան հասցէն՝ Թաւրիզ
ՄԻՏՔ-ի խմբագրութիւն կամ Tauris (Perse)
Rédaction du journal «MITK»

ՄԻՏՔ

ԹԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ—ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

1. Մեզ գրողներից ինդրւում է գրեն պարզ, մաքուր և անպայման թղթի առաջին երեսի վրայ։
2. Խմբագրութիւնս իրեն է վերապահում իրաւունք՝ ստացուած յօդուածները փոփոխութեամբ և կրճատումներով հրատարակելու։
3. Մենք մերժում ենք „ւ“ ի և „վ“ ի ուղղագրական հերձուածը և մեզ ենք վերապահում իրաւունք՝ ստացուած նիւթերը տպել մեր ընդունած ուղղագրութեամբ -ու-ով։
4. Չտպուած կարճ յօդուածները չեն վերադարձնւում։ Ուղարկուած. և չտպուած երկար նիւթերը յետ ստանալու համար պէտք է ուղարկել պօստի ծախսը։
5. Չի տպուի ոչ մի յօդուած եթէ դա կեղծ անուան հետ միաժամանակ չի կրի յօդուածագրի անուն ազգանունը։
6. Բաժանորդները թերթ չստանալու դէպքում շուտով տեղեկացնելու են մեզ՝ հակառակ դէպքում խմբագրութիւնս իրեն դերծ է համարում պատասխանատուութիւնից։
7. Չտպուած յօդուածների համար խմբագրութիւնս բացատրութիւններ չի տալիս։
8. Հասցէները փոխելու համար պէտք մեզ ուղարկե 2 դրան 10 շահի։

№ 21 1912 Թ. ՇԱԲԱԹ 21 ՅՈՒԼԻՍԻ 1912 Թ. № 21

ԾԱԽՈՒ ՏՈՒՆ

Ծախւում է հանգուցեալ Նիկողայոս Մելիք Բաբաջանեանի տունը, որ գտնւում է Ղալի Բաղան թաղում։ Տունն ունի փողոցի կողմում երկու սենեակներ, երկուական ընդարձակ սանդուխներով իրենց յետևում։

Այդ սենեակների հանդէպ՝ բակի միւս կողմում կայ մի ընդարձակ հիւրասենեակ մի փոքր նախասենեակով։ Յետևում կայ նաև մի փոքրիկ բակ խոհանոցով և թոնրատնով։ Ջերզամիները ըստ ամենայնի յարմարաւոր են։

Գնել կամեցողները թող բարեհաճեն դիմել Արամեան դպրոցի հոգաբարձուներից պ. Ա. Տէր Կարապետեանին և կամ պ. Կոստի Բաբայեանին։

5—2

ԿԱՅՍՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԲԱԼՏԻԱԿԱՆ ՋՐԵՐՈՒՄ և ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸ.

—

Վաղուց է, որ դեսպանախորհուրդները փոխարինուել են Եւրոպական վեհապետների տեսակցութեամբք, կամ վեհապետների ու հասարակապետական երկրների ներկայացուցիչների այցելութեամբք, որք այնքան ճակատագրական ազդեցութիւն են ունենում ազգերի կեանքի վրայ։

Անգլիական, իրաւ, մեծ թագաւոր Էդուարդ Է.-ի տեսակցութիւնը Ռևելում ինքնակալ Նիկոլայ Բ.-ի հետ բաւական եղաւ, որ Մակեդոնիան ու Հայաստանը արեան մէջ խեղդող Օսմանցիներին ուշքի բերի և պատճառ դառնայ որ... վերջապէս նրանք սահմանադրութիւն հռչակեն, խուսափելու վրահաս անդամահատութիւնից։

Նման մի ցնցումն քաղաքական աշխարհում առաջ է բերել Գերմանական կայսր Վիլհելմի և Ռուսաց կայսր Նիկոլայ Բ-ի տեսակցութիւնը—Յունիս 21—Բալտիական Ջրերում։

Այդ տեսակցութիւնը աշխարհի նշանակալից պատմական դէպքերից մէկը պիտի համարել։ Դեռ մենք այստեղ զանց ենք առնում Եւրոպական դիպլոմատների և թերթերի արտայայտած կարծիքները երկու հզօր կայսրների այդ նշանակալից հանդիպման մասին այն ժամանակ, երբ Թրքо—իտալական պատերազմը շարունակւում է դեռ զօրաւորի իրաւունքը չյայտարարելով, երբ Բալկաններում սև ամպեր են կուտակուել։ Երբ դեռ Մարոկկեան հարցը Սպանիա-Ֆրանսական դիպլոմատիայի գլխին մի Դամոկլեան սուր է դարձել, երբ Մերձաւոր ու Հեռաւոր Արևելքի խնդիրները հերթական նշանակութիւն են ստացել և վտանգում են Եւրոպական հաւասակշռութիւնը և այլն։

Մի կողմը թողնենք այդ բոլորը և տեսնենք ի՞նչ ծնեց այդ տեսակցութիւնը Մերձաւոր Արևելքի համար մասնաւորապէս։

—«Միտք»-ի նախորդ համարում, անշուշտ, ամենքը կարդացին այն սենսանցիօն լուրի *) մասին, որ տարածուել է Պետերբուրգում։ Մի լուր որ խօսում է աշխարհագրական քարտիզի փոփոխութեանց և ազգերի ճակատագրերի տնօրինութեանց մասին՝ ի հաշիւ Օսմանեան կայսրութեան բաժանման և Պարսկաստանի անադամահատութեան։

Ինչ խօսք որ այդ լուրը, եթէ անգամ չափազանցութիւն էլ լինի, իր սկիզբն առնում է Բալտիական Ջրերում կայսերական տեսակցութիւնից։

Հինգ հարիւր տարի է, որ Եւրոպան ուղղակի տանջւում է Օսմանեան կօշմարից։ Եւրոպական խաղաղութեան վրդովումը մեծ մասամբ կապուած է Տաճկական կայսրութեան հետ, որ բացի աւերու կոտորածներից ոչինչ չի տուել աշխարհին ու մարդկութեան և ստեղծել միայն մի չարաբաստիկ Արևելեան հարց՝ ի տանջանս և ի յոգնեցումն Եւրոպական դիպլոմատիայի։

Դարեր շարունակ կոված լինելով Եւրոպային, Տաճիկը մնաց անհաղորդ ու անթափանց Եւրոպական կուլտուրային։ Փոխարէնը նա իրեն անմահացրեց Բոլգարական սարսափներով, Հայկական Ջարդերով, Լիբանանի արիւններով և աշխարհի ամենաարգաւանդ տեղերը լերկ անապատների ու աւազականոցների վերածելով, մինչդեռ դորանք հին աշխարհի առատութեան շտեմարաններն էին։

Հէնց Տաճիկների այս յատկութիւնն ի նկատի ունենալով է, որ մեծ ծերունի Գլադստոն ասել է. «Թուրքին քաղաքակրթելու համար՝ կամ պէտք է սուրը խլես կամ Ղուրանը»։

Եւրոպական դիպլոմատիան ի դէմս երկու կայսրների, երևի, եկել է այն եզրակացութեան, որ Տաճկից առանց վերոյիշեալները խլելու՝ կարելի է նրան անվնաս դարձնել՝ ընդհանուր համաձայնութեամբ նրան դէպի Փոքր Ասիա մղելով։

Այս համաձայնութեամբ ահա, և ըստ ստացուած լուրի՝ հիմնովին փոխւում են Եւրոպական պետութեանց սահմանները, անկախութիւն կամ ինքնավարութիւն է ստանում արիւնլուայ Մակեդոնիան... իսկ Ռուսիան՝ Պոլսին ու հիւսիսային Պարսկաստանը։

Արդ, այդ բոլորի մէջ ի՞նչ է լինելու հայերիս բաժինը կամ ապագան։

—Մեր մասին այլ ևս խօսող չկայ։ Զէնքն ու արեան ճապաղիքն են կորզում անկախութիւններ։ Աւաղ, մենք շատ վաղ և և նախաժամանակ վատնեցինք մեր երիտասարդ ոյժերն ու մարտական անփոխարինելի սերունդները։

Մենք ասիական ժողովուրդ ենք։ Իսկ Ասիայի հրամանատարութիւնն արդէն հզօր Ռուսիոյ ձեռքումն է։ Ուստի թէ Ռուսաստանում և թէ Ռուսաստանի սահմաններից դուրս, որ երկրի հաւատարիմ և ազնիւ քաղաքացիներն էլ լինինք, մենք պէտք է հանդիսանանք Ասիայի գերիշխանի կամ հրամանատարի լաւագոյն բարեկամները։

Մենք իբր անհատ և իբր ամենակրտսեր հրապարակախօս՝ բոլոր ազգերի ու հայրենիքների անախանութեան կուսակից ենք։ Իսկ եթէ Եւրոպական կօնցերտը դրա հակառակն անել կամենայ ու վճռի, ապա հայերիս կմնայ ապահովել մեր ապագան՝ լի վստահութեամբ նայելով դէպի հիւսիս և հեռու լինել քամի սերմանելուց, որպէս զի փոթորիկ չհնձենք։

—

Հայոց գրերի գիւտի 1500-ամեայ եւ Հայ տպագրութեան 400-ամեայ Յոբելեանը

—

Երբ հրապարակ հանուեց «Մշակ»-ի 40-ամեայ յոբելեանի հարցը, միաժամանակ մէջտեղ եկաւ և հայկական չկամութիւնը։

—Պէտք չէ տօնել «Մշակի» 40-ամեակը, որովհետև...կայ աւելի կարեւոր յոբելեան և դա Հայոց տպագրութեան 400-ամեակի յոբելեանն է, ասաց չկամութեան ձայնը։

«Մշակ»-ի յոբելեանի խանգարումը, որին գլուխ էր կանգնած «Հորիզոնը», ստատ ունէր միայն 400-ամեակի հարցը։

«Մշակը» գնաց իւր ուղիով, միայն ամօթահարութիւնը բաժին մնաց մեր ժամանակակից Գդիոն Սիւնիներին։ Իսկ 400-ամեակի խնդիրը դարձաւ ակադեմիական հարց, որի աշնան կամ 1913-ի տօնման պաշտպան էր «Մշակը» ի դէմս Մալխասեան հայկաբան բանասիրի, իսկ contre կողմն էր «Հորիզոնը» ի դէմս Լէօ-ի։

«Մշակն» անշուշտ հակառակ չէր տպագրութեան 400-ամեակի տօնման, այլ նա հակառակ էր համազգային այդ տօնը մասնակի խմբի ձեռնարկ լինելուն։ Նա տպեց յօդուածներ և անգամ առաջնորդող, որ մի այդպիսի յոբելեանի գլուխ պէտք է կանգնի Էջմիածինը, իդէմսամենայն հայոց կաթուղիկոսի, մանաւանդ որ տառերի գիւտի 1500-ամեակն էլ զուգադիպում է տպագրութեան 400-ամեակին, իսկ տառերը գտնող Մեսրոպի սրբազան դամբանն էլ մօտ է Էջմիածնին-Օշականում, և արժէ այդ օրը յողջոյն գալ նրա նշխարներին։

*) Տես «Հորիզոն» № 143

Թուում էր թէ հակառակը պնդել աւելորդ էր և ապարդիւն։ Սակայն «Հորիզոնը» հակառակեց այդ մտքին։ Իբրև 400-ամեակի հարցը հրապարակ հանող՝ նա պաշտպանում է յոբելեանի տօնումը կատարուի Թիֆլիզում և նոյեմբեր 26-ին...

Նորոգ օծեալ Գէորգ Ե. կաթուղիկոսը արձագանք տուեց աւելի շուտ «Մշակի» ձայնին և կարգեց յոբելեանական յանձնաժողով, հայ գրերի գիւտի և տպագրութեան ազգապարծան յոբելեանը տօնելու էջմիածնում Հոկտեմբեր 13-ին Ս. Թարգմանչաց տօնին։

Այս պատկառելի յոբելեաններին առաւել գեղեցիկ զուգադիպում չէր կարող լինել, քան մեր պանծալի Թարգմանիչների տօնի զուգադիպումը։

Մենք ևս բարձրացնում ենք մեր ձայնը այդ երկու եզակի յոբելեանները տօնել Ս. էջմիածնում և Հոկտ. 13-ին։

Ժամանակ է որ մեր լուսոյ խորան էջմիածինը գլուխ կանգնի այդպիսի համազգային տօների կատարման և հանդիսանայ իբրև կենտրոն մեր լաւագոյն իղձերի և կուլտուրական ձեռնարկութեանց։

Միայն մենք չէինք կամենայ այդ յոբելեանը յաւերժացուէր դպրոցական ֆօնդով։ Մենք կուսակից ենք գրական ֆօնդի։ Հայ ազգը, ինչ էլ որ լինի, հաւաքաբար ամեն տեղ... լաւ թէ վատ՝ հոգում է իւր դպրոցները։ Իսպառ անտէր և անխնամ է մնում ու մնացել գրական ապահովութեան հարցը։ Մեր կարծիքն այն է, որ գրական ֆօնդի հարցի պաշտպանութիւնը պիտի վայել է առաջնակարգ տեղ։

Սքանչելի է, որ էջմիածինը բոլոր հայ գաղթավայրերին և քաղաքներին ևս հրաւէր կարդայ այդ յոբելեանին մասնակցելու համար, որպէս զի, որքան կարելի է, տօնը լինի բազմամարդ, փառահեղ և նիւթապէս էլ ապահով։

Ինչ խօսք, որ Թաւրիզն էլ իւր պատուաւոր տեղը կբռնի այդ աննախընթաց յօբելեանի կատարման մէջ՝ թէ իւր պատուաւոր ներկայացուցիչներով և թէ իւր պատուաբեր նուիրաբերութեամբ։

Գործ. Սպ. Սպանդարեանի Դաշնակցականների շրջաններում մտքերի տարամադրութիւնների հոսանքը[1]

Այս միջոցին ես նկատեցի դաշնակցականների շրջանում մտքերի կարծիքների և տրամադրութիւնների մի նոր և Սպ. Սպանդարեանին բոլորովին հակառակ հոսանք։ Խօսում էին որ դաշնակցական զանազան բիւրօնեներից դժգոհութեան նամակներ են ստացուել. դժգոհ էին «Դրօշակի» խմբագրից, որ «անձնատուր» է եղել և իրան տանուլ տուել, համաձայնուելով Բուրցևի հետ՝ ընդունել է Սպ. Սպանդարեանի ամեղութիւնը։ Աւելի խիստ նամակներ էին ստացուել Կովկասից՝ ինչպէս կամ ծախքը վճարելու միտքը նրանց կատաղեցրել է։ Ասում էին, որ «Դրօշակի» խմբագիրը չգիտէ, թէ ինչ անէ, ինչպէս դուրս գայ իր անելկացութիւնից. մի կողմից ճշմարտութիւնը, Սպանդարեանի անմեղութիւնը, միւս կողմից 175 հազար անդամներից (այդպէս են պարծենում դաշնակցական շէֆերը) բաղկացած կազմակերպութեան հեղինակութիւնը, վարկը—պէտք է որ սեղմէին «Դրօշակի» խմբագրին—վտանգւում էր այդպիսով այս վերջինի դիրքը։ Սրա մասին ասում էին, որ հազար երանի կը տար, եթէ իրան ազատէին իր ստանձնած դերից։ Բոլոր խօսածներից կարելի էր նկատել այս միտքը, աւելի լաւ է, որ դատարանը վճիռ չկայացնի, քան այդ վճիռը լինի յօգուտ Սպ. Սպանդարեանի։ Այդ բանին հասնելու համար, պատմում էին որ քանիցս Դաշնակցութիւնը առաջարկել է գործի վճիռը յետաձգել մի տարով, վեց ամսով։ Այս նշանակում է խառնել գործը, ցրել դատարանը, ընդմիշտ մեղադրանքի տակ պահել Սպանդարեանին և չթողնել, որ նա մատնակցի կաթողիկոսական ընտրութեանը։

Խօսում էին, որ Սպ. Սպանդարեանին նորից հարց ու փորձ անելու կոչել են Պարիզ, բայց նա չի եկել։ այժմ նորից կանչել են, դարձեալ չի եկել։ Եւ մի տաքագլուխ դաշնակցական ասում է, թէ նրան տեսել են արդէն, ինչպէս կը համարձակուի նա գալու, քանի որ Դաշնակցութիւնը գործի յետաձգումն է պահանջում։ Մէկն ասում է դաշնակցականներից՝ մասնաւորը պէտք է զոհել ընդհանուրին։ Մասնաւոր ասելով պէտք է հասկանալ Սպանդարեան-անմեղութիւնը։ իսկ ընդհանուր խօսքի թարգմանութիւնն է—«Դաշնակցութիւն» կոչեցեալ կազմակերպութիւնը։ Ոմանք «ի նոցանէ» ասում էին ցինիկաբար. «ինչ մի մեծ յանցանք է, որ Սպ. Սպանդարեանը ամբաստանուել է անմեղ տեղը. ինչքան էլորանմեղ լինի, բարձր լինի—նա մի անհատ է. մեծ բան է. առաջին անգամն է, որ անմեղը ամբաստանուում է և տուժում. եթէ ցաւելու բան կայ այս գործի մէջ Դաշնակցութեան գործ դրած տակտիկան է, որ սխալ է եղել։

Այս կողմից, այն կողմից խօսակցութեան միջամտում էին՝ «սկզբունքը» է գերագասելի և դա պէտք է այս գործում տիրապետողը լինի. սկզբունքին պէտք է զոհել անհատը, նրա պատիւը, ճշմարտութիւնը, ամեն բան. կեցցէ սկզբունքը։

—Զբաղցատրեցիք, որն է այդ սկզբունքը, հարցրեց մէկը։

—Զեռ իմանում. Դաշնակցութեան շահերը, վրայ էտպիս ճիւաբ։

- Այդ սկզբունքի համար կարելի է թալանել, անմեղին մեղաւոր ճանաչել, սպանութիւն գործել, կոչուած է միւս կողմից մի տափակագլուխ ոգեւորուած։

Եթէ յաջորդաբար վարուելու լինինք, այդ սկզբունքով կարելի է ոչնչացնել և հայոց ազգը, եկեղեցին, էջմիածինը, ընդհատում է մի երիտասարդ ուսանող, որ դեռ թարմ է և Դաշնակցութեան «պատմութիւնից» տեղեակ չէ։

—Ի հարկէ, միանգամից խօսքը կտրում են մի քանի կողմից, ազգ թէ եկեղեցի, այն ամենը, որ Դաշնակցութեան առաջնութեան խոչընդոտ է հանդիսանում, պէտք է կործանել ոչնչացնել։ Սա բնական օրէնք է։ Ինչու անհանգստանանք. Դաշնակցութիւնը—ինքը ազգն է. մտածեցէք, 175 հազար անդամ։ Ինչպէս կարողէ Դաշնակցութիւնը թոյլ տալ, որ մի անհատ նրան յաղթէ, որքան և նա խոշոր լինի անմեղ լինի. հասկացաք.... «Նոր-Դարի» խմբագրի դժբաղդութիւնն է, որ ընկել է այդ սկզբունքի արա[illegible]։

Մի երիտասարդ ճարտարապետ ինձ բացատրում է Սպանդարեանի դէմ գործ դրած սխալ տակտիկայի միտքը։ Որ ասում են, թէ Դաշնակցութեան գործ դրած տակտիկան սխալ է, պէտք է իմանալ, թէ որն է ուղիղ տակտիկան։ Ուղիղն այն է, ասաց ինձ այդ պարոնը, որ Դաշնակցութիւնը նախ պէտք է սպանել տար Սպանդարեանին և յետոյ հրատարակէր իր մեղադրանքը Մենշիկովեան վկայութիւններով կամ, ինչպէս տպել էր՝ անժխտելի փաստագրերով։ Չկայ այլևս Սպանդարեան—կան փաստագրեր. ով պէտք է կարողանար այնուհետև հերքել ու մերկացնել սուտը, կեղծիքը....

Պատմում էին, որ հետզհետէ «Նոր-Դարի» խմբագրի և «Դրօշակի» խմբագրի միջև յարաբերութիւնները լարուել են. սկզբում միմեանց մօտեցած են եղել, իսկ յետոյ տեղի են ունեցել խիստ և աղմկալի ընդհարումներ նիստերի միջոցին։

Ես փորձեցի տեսնուել Բուրցևի հետ կամ նրա մօտիկ մարդկանց, որ-

---

1) Սկիզբը տես «Միտք» № 20

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԹԻՒՐՔԻԱՅԻ ՀՈԳԵՎԱՐԸ[1]

Երիտասարդ Թիւրքիայի կառավարութեան ձեռք առած խիստ միջոցները զօրքի մէջ ծագած յեղափոխական շարժումը ճնշելու համար՝ բաւական ուշացած կարելի է համարել։ Մի շաբաթ առաջ՝ Թայեար բէկը և նրա կողմնակիցները, որոնք փախել էին լեռները, առաջին համարձակ քար նետողներն էին «Միութիւն և Յառաջադիմութիւն» կոմիտէի բռնակալութեան դէմ։ Ներկայումս Մոնաստիրի ապըստամբութեան արձագանքը տարածուել է հեռաւոր վայրերում ցրուած զօրքի մէջ։ Դարդանելի պաշտպանութեան համար հաւաքած զօրքի մի մասը, որ ուղարկուած էր Մոնաստիր, հրաժարուեց գնդակ արձակել իր ապստամբ ընկերների դէմ։ Փոքր Ասիայի զօրաբանակը, որ յայտնի է գահին և կարգ ու կանոնի պաշտպանութեան համար մատուցած իր հաւատարիմ ծառայութիւններով, բռնկուել է նոյնպէս յեղափոխական շարժմամբ։

Զմիւռնիայի վալին, որ քանիցս զգուշացրել է Մահմուդ փաշային Զմիւռնայի շրջակայքում կենտրոնացած բանակից զօրք չուղարկել ապըստամբ վայրերը բացասական արդիւնք ստանալու պատճառաբանութեամբ, միանգամայն իրաւացի էր. վալու մարգարէութիւնը կատարուեց.— զմիւռնական զօրաբանակի երկու վաշտ հրաժարուեցին Ալբանիա գնալ։ Բացի զօրքի ցոյց տուած այս երկու նշանաւոր անհնազանդութեան դէպքից, ուրիշ շատ սոյնանման դէպքեր էլ են տեղի ունեցել պետութեան զանազան վայրերում։ Այսպէս օրինակ՝ լուրեր են պրտում թէ՝ Եւրոպական և Ասիական Տաճկաստանի սպայակոյտի մեծամասնութիւնը երդուել է զէնք չբարձրացնել իրենց ապստամբ ընկերակիցների դէմ։

Պօլսի կառավարական շրջանները, նախաւանդ սովորութեան պէս, աշխատում են ամեն ինչ թաղցնել ժողովրդի աչքից և հաւատացնել նրան, որ շնորհիւ Երիտասարդ Թուրքերի կոմիտէի ձեռք առած խիստ միջոցների՝ ամեն ինչ խաղաղ է։ Բայց փաստերը դալիս են տրամագծորէն բոլորովին հակառակն ապացուցանելու։ Երիտասարդ Թուրքերը իրենց ստապատում կեղծիքնե[illegible]օվ վաղուց են իրենց դատաւորը գտել.— այլ ևս նրանց հաւատացող չկայ։ Պարլամենտը խիստ հրաման է արձակել զօրքին, որ նա քաղաքական խնդիրներով չզբաղուի։ Կառավարութիւնը, որ դեռ երէկ, սպառնում էր ապստամբներին խիստ պատիժներով, ներկայումս միջնորդներ է ղրկում Թայեար բէկի մօտ առաջարկելով բարարարութիւն տալ նրա և նրա կողմնակիցների պահանջներին։ Երիտասարդ Թուրքերի պարագլուխները կամաց կամաց թողնում են յուլիսեան ռեժիմի խորտակուող նաւը և հեռանում՝ խորտակումը չտեսնելու համար։ Առաջին օրինակ տուողն եղաւ յայտնի հրապարակախօսը Հուսէյն Զաւադ բէյ՝ գաղտի Զոհրերիա փախչելով։

Բայց ամենից բնորոշ երեւոյթն է ներկայումս մայրաքաղաքում տիրող ընդհանուր սարսափը։ Օրինակ՝ մի քանի օր սրանից առաջ Ղալաթիայում մի չնչին պատճառից—մի ոծտորի պայթումից—սոսկալի իրարանցում ընկաւ քաղաքում։ Սարսափահար բնակիչները, բոլորովին առ բոլորովին սպասում են թէ ահա որտեղից որ է հիմա զօրքերը ներս կխուժեն քաղաքը և ապստամբութեան դրօշակը կբարձրացնեն։

Իհարկէ, «գող՝ սիրտը գող», ասում է առածը, բայց դեռ Մոնաստիրից մինչև Պօլիս ճանապարհ շատ կայ...

Երիտասարդ Թիւրքիայի ներկայ դրութիւնը արդարև շատ յուսահատական է։ Ալբանական ապստամբութիւնը անցեալ տարուայ նման սպառնական կերպարանք է ստացել. ապստամբների թիւը 20,000-ից անցնում է։ Թէպէտ և Թուրքերին յաջողուել է Միտրովիցի մօտ յայտնի զօրավար Իսսա Բոլետենացի արշաւանքի առաջն առնել, բայց այնուամենայնիւ հիսիսային Ալբանիայի տէրն ու տնօրէնը ապստամբներն են։ Ճանապարհները ամենուրեք բռնուած են ապստամբներով և կտրտուած են հեռագրական թելերը ու այսպիսով Սկուտարում, և այլ քաղաքներում*) եղած Թուրք զօրքերը կտրուած են կայսրութեան միւս մասերում եղած զօրքերի հետ ունենալիք հաղորդակցութիւնից։ Չնայելով անցեալ տարուայ Ալբանացիների զինաթափութեան և խաղաղացման, որի մասին մի առանձին հպարտութեամբ փող էին փչում Երիտասարդ Թուրքերը, այնուամենայնիւ, կարծես մի հրաշքով, Ալբանացիները այս րոպէիս ունին թէ զէնք և թէ փող։ Ալբան ապստամբների պարագլուխները շտապել են սերտ կապեր հաստատել ապստամբ զօրքերի հետ և մշակել մի ընդհանուր ծրագիր երկուստեք համապատասխան գործողութիւններ սկսելու Երիտասարդ-Թուրքերի կառավարութեան դէմ։ Այդ իսկ պատճառու էլ հրամանատար Զաւադ փաշան անցեալ տարուայ նման հեշտութեամբ չի նուաճիլ ապստամբնե-

1) Սա պէտք է տպուէր նախորդ № 20-ում, սակայն յետաձգուեց նիւթերի առատութեան և տեղ չլինելու պատճառով։

*) Դիակովում, Դիպրում։

պէս զի գործից ճիշտ տեղեկութիւն առնեմ, բայց չյաջողուեց։ Յունիսի վերջերին ամենքը ցրու�են, գնում են ջրեր կամ գիւղեր հանգստանալու։

Ի՞նչ անեմ, մոռացեցի՝ գնամ «Նոր Դարի» խմբագրին ներկայանամ, գուցէ մի բան իմանամ նրանից։

Պարոն Դ., որ, իր ասելով, տասնվեցերորդ տարի առաջ Պարսկաստանից թող թակցել է «Նոր-Դարին», ընկերացաւ ինձ և մենք միասին գնացինք Սպանդարեանի բնակարանը Hôtel du Brezil (rue le Goff, 10)։

Փարիզ «Հովիտ» Պ. Թ.

(Շարունակելի.)

ՄԱՄՈՒԼ

Սահմանադրական Թիւրքիան հայերից, ինչպէս գիտեն ամենքը, զինուորներ է առնում։ Եւ զինուորներ են վերցուում 25—45 տարեկան հայերը։

Թէ որքան փնասակար ու քայքայիչ է մինչ այդ տարիքը հայերը բանակում մնան, այդ արդէն բացատրութեան պէտք չունի։

Հայերի մինչև 45 տարին իբրև զինուոր ծառայելը առիթ է տուել «Կոհակի» խմբագրապետ պ. Հմ. Աբրամեանին մի հարցապնդումով դիմել Ազգային Ժողովի Վարչութեան, թէ ինչ միջոցներ են ձեռք առնուած կարճել հայ զինուորների ծառայութեանց տարիքը։

Խմբագրապետը չբաւականանալով դրանով՝ «Կոհակի» մի քանի համարներում խմբագրական յօդուածներ է տուել «Զինուորական Բանակները» վերնագրով, որոնցով ցոյց է տուել միլիտարիզմի չարիքները և առաջարկել Զուիցերիոյ ձևով ժողովրդական միլիցիա պահել։

Խմբագրապետը իր իմաստալից յօդուածաշարքը վերջացնում է այսպէս.

ՐԻՆ, այլ մեծամեծ դժուարութիւնների կհանդիպի։

Միւս կողմից՝ մակեդոնական ներքին կազմակերպութիւններն էլ կարծես աշխատում են օգտուել Երիտասարդ Թուրքերի նեղ դրութիւնից և գլուխ բարձրացնել։ Մակեդոնիայում արդէն սկսել են երևան գալ Բոլղարական հրոսակախմբեր. Բոլղարական կառավարութիւնը մակեդոնական հարցի առթիւ նշանաւոր քայլեր է անում դիմելով մեծ պետութիւններին և ներկայացնելով նրանց վերջին ժամանակներում Մակեդոնիայում Թուրքերի ձեռքով սպանուած Բոլղարների ցուցակը։ Թիւրք-իտալական պատերազմը ունեցաւ ծայր աստիճան աննպաստ հետևանք Թիւրքիայի համար։

Արշիպելագի յոյն ազգաբնակութիւնը իւր համակրութիւնն է ցոյց տալիս իտալացիներին. Եւրոպական մամուլը անհնարին է համարում Իտալիայի կողմից գրաւուած կղզիների վերադարձումը նորից Թիւրքիային։ Ակնյայտ է, որ Եգէյեան հարցը չեն կարող լուծել։ Իրերի այսպիսի խառնակ դրութեան մէջ անխուսափելիօրէն դրուխ կբարձրացնի նաև Կրետէն և եթէ Թիւրքիան զրկուի հարաւի կղզիներից, այլևս հովանաւորող պետութիւնները չեն ճանաչել նրա դերիշխանութիւնը Կրէտէի վրայ։

Բոլոր երկիրներու ընկերվարականները, հետևաբար և բոլոր Սոցիալ Դեմոկրատ Հնչակեանները, սկզբունքով և գիտակցութեամբ դէմ են միայուն բանակներու դրութեան և կպահանջեն փոխարինել զանոնք համաժողովրդական բանակով կամ միլիսով, համոզուած ըլլալով, որ այդպիսով միայն առաջը կառնուի պուրժուական արկածախնդրութեանց և որ ատով ժողովրդեան արդարացի բողոքները մէկ մասը վերջ կգտնէ, մարդիկ ի վիճակի կըլլան նուիրուելու իրենց տնտեսութեան և սեպհական աշխատանքին։

Մենք մեղաւոր չենք, որ դուք կոյր ու խուլ էք

Արդէն ամենքին յատնի է, թէ Աբրամեան և Ս. Անանեան երկսեռ դպրոցների հոգաբարձական ընտրութիւնը որպիսի տաք, անգամ կատաղի պայքար առաջ բերեց Թաւրիզում։

Պայքարողներն էին մի կողմից ժողովուրդը և միւս կողմից լեգալիզացիայի որդեգիրները, կծկուած՝ արդէն դիմակապատառ «համերաշխութիւն» սկզբունքի տակ։

Ժողովրդի բերանն էր «Միտքը» իր անվերապահ մերկացում ներով և համարձակաբան լեզուով։ «Համերաշխականները» պաշտօնական բերան չունէին. թէև չարալեզութիւն մեր մասին անդուռն էր և անսահմանափակ նոցա բերնում։

Ի վերջոյ «կոմսոպոլիտներին» դառնապէս խաբող թայֆայականները հանդէս եկան երկու «թունդ» թռուցիկներով, որոնց իւրաքանչիւր տողում մեզ ու «Միտք»-ին մի լաւ օրհնաբանել էին։ Իրանք ժանտ հոգիների վիժուածքներ էին, որոնց մասին չի կարելի խօսել առանց ծայրայեղ նողկանքի կամ առանց ծովային հիւանդութիւն բռնելու։

Ապա հետևելով ժողովրդականներին՝ նոյն այդ խմբակը Յուլիս 7-ին նրանց նման, 2 էջից բաղկացած մի թռուցիկ նորէն հրատարակեց։ Դարձեալ ամեն տողում Տէր Վարդանեան և «Միտք»՝ զանազան ձևերով հոլովուած ու հայհոյուած փողոցայնօրէն։

Այդ դիւահարուածները, թէ «ի քուն երազ և թէ յարթնութեան տեսիլ, թէ ինաւախօսի և թէ ի մէջգիշերի» մի սոսկալի կօշմարից են սանջուում-Տէր Վարդանեան կօշմարից ու «մատնիչ» [1])«Մտքից»։

Մեզ իսպառ վարկաբեկելու համար՝ այդ վարկաբեկիչները մեզ «փեղադրել էին», որ իբրև թէ մենք ,,Զաքարիայի պապանծուն'' ենք պահպանել Արաժեան դպրոցի հոգաբարձուների 10,000 ղուռն ,,վատնման'' շուրջը։

Արդեօք մենք ,,Զաքարիայի պապանծուն պահել։ Դուք, որ նեմիզիդաներիսպառնալիքով յայտարարում էք թէ ոչինչ չի խուսափում ձեր «արթուն» կազմակերպութեան աչքերից հապա ինչպէս է որ կոյր ու խուլ էք մնացել ճիշտ 3 ամիս առաջ մեր բացարձակ յայտարարած լուրի հանդէպ։

Բացէք «Միտք» №-7, 7-ապրիլ, էջ 4, սիւնեակ 1 և տող 15-րդ ու կարդացէք մեր այս գրածը. «Ղալայի հոգաբարձութիւնը երկու տարուայ ընթացքում շուրջ 1500 թուման բացունի, եթէ չստացուեն նպաստները»

Ուրեմն մենք ոչ միայն չենք լռել, պապանծել և թագցրել, այլ ձեր ասած 10,000-ը մենք 15,000 ղուռն ենք իմացել։[2])

Ա՛յ, դուք միշտ այդպէս ստերով էք կերակրել ձեր շարքերին ու հետևողներին և էլի ձեզ «սրբեր» հռչակել։

Այդ դուք էիք, պարոններ, որ իր ընտրութիւնն ընդունող ու հեռագրով շնորհակալութիւն յայտնող Մէջլիսի պատգամաւոր Յովսէփ Միրզոյեանի 5 ամիս մէջլիս չգնալը գիտնալով հանդերձ՝ ծածկել էիք «Առաւօտում», մինչև որ մենք «Զանգ»-ում մերկացրինք ձեզ ու ձեր «ազգային խորհուրդն» ու Միրզոյեանին՝ և մղեցինք վերջինին դէպի Մէջլիս, հակառակ նրա ամեն կարգի սոփեստաբանութեանց։

Այդ դուք էք, որ տարիներ շարունակ լռել և ծածկել էք Վիլաւի դպրոցի ձերոնց թալանների մասին և այսօր 15,000 թուման փոխարէն՝ դարձնում էք ժողովրդին մնանկ մի դպրոց։

Դուք էք որ Դր. Սեղբոսեանի գլխապատառումը, «Բիւզանդիոնի», «Գաւրօշի» խմբագիրների երիցս ձերոնց կողմից տեռորուելը ծածկել էք և կեղծել։ Սալմաստի ձեր դիւցազնութեանց վարագոյրը բարձրացնենք։ Եթէ խօսենք հէնց միայն Վիլաւի դպրոցներում... կատարուածներից 100-ից մէկի մասին, որ ամեն կերպ թագցրել էք և եթէ ի յայտ բերենք... ական վրկայութիւնը մինչև ուր չէք փախչի։

Բայց ի պատիւ... լռում ենք։

Թայֆայականներիդ հարիւրաւոր այդպիսի «պապանծուններիդ» մասին մենք կարող էինք անվերջ փաստեր կուտակել, սակայն այսքանն էլ էլ բաւ էր ցոյց տալու, որ մենք միշտ ամեն տեղ և ամեն բանում անվերապահ ենք և բաց ճակատ, իսկ եթէ դուք կոյր ու խուլ էք, մենք այլևս մեղաւոր չենք։

Դուք շարունակեցէք խածնել մեր ազգերը ձեր շրջաններում, մագազիններում և այլն։ Թող դեռ Սպանդարիանցն վերջանայ «Մտքի» էջերում, այնուհետև մենք դեռ շատ գործ ունենք ձեզ ու ձեր «Ազատամարտի» ու «Հայրենիքի» հետ։ Դեռ վաղ է ձեր օրգիայով պանծալը.

Rira bien, qui rira le dernier.

Ա. Տ. Վ.

ՅԱՆԳԱՒՈՐ ՖԷԼԻԵՏՈՆ

(Նուէր միջազգային պզտիկ գործչին)

Յուլիս ութին
Դեռ շատ մութին՝
Անտէր դարդից,
Հրսի զարբից՝
Սէթօ ապին,
Զարթեց քընից,
Մի դաստա թուղթ
Աբի տակին,
Էլաւ տունից։
Հէնց որ հասաւ
Ժամի քիւշէն,
Ձեռքը տարաւ,
Հանեց բուխչէն։
Եւ բուռը ձիգ՝
Մի թռուցիկ,
Շրափփաղան
Խփեց փային,
Վերցաւ դաբան։
Մէկ էս պատին,
Մէկ էն պատին,
Եկաւ կայնեց
Զարգար-բաշոնց
Դռան տակին։
Զորս ժամ յետոյ
Իրան ոտով,
Աբտուշ ապին
Մի աթոռով,
Սէթօ ապուն
Ողջունելով,
Առաւ նրան
Դրաւ վրան,
Պատուիրելով,
Որ գացողին
Անց կացողին
Զարբի ճխտի,
Եղած թղթից
Մի հատ տալով
Աղաչելով,
Պաղատելով,
Ոմանց զոռով,
Ոմանց խաթրով,
Հրաւիրի,
Դէպի ժողով։
—Ինձնից եղիր
Դու արիային,
Աբտուշ ապի,
Դու շտապի
Միրզա Շաւուն
Մի կերպ խաբի։
Էրէկուանից՝
Ձեր էդ բանից
Մի քիչ փառթա.
Բայց չը կարծես
Որ նամարդա։
Աշխատիր սոսկ
Տալ ազնիւ խօսք,

Ի վերջոյ՝ Թուրքական ֆինանսները շատ ողորմելի վիճակի մէջ են գտնուում։ Ել ու մուտքի հաշիւը, որ մօտիկ անցեալում ներկայացուած է պարլամենտին, 260 միլիոն ռուբլի չնչին բիւջէից 52 միլիոն կամ 20% դեֆիցիտ ունի։ Ֆինանսների մինիստրը խոստովանել է իր ջանքերի խորտակումը արտաքին փոխառութեան յաջողութեան նկատմամբ։ Միակ յոյսը, որ ունի Թիւրքիան իր դատարկ գանձարանի յատակը միայն ծածկելու համար՝ այդ ներմուծուող ապրանքների մաքսի յաւելման խնդիրն է, որ կարող է տարեկան տալ 14-15 միլիոն ռուբլի եկամուտ, բայց այդ էլ դեռ ևս հարց է թէ արդեօք. օտար պետութիւնները կհամաձայնեն այդ որոշման։ Մի խօսքով, բոլոր նշանները ցոյց են տալիս, որ Երրտասարդ Թիւրքիան հոգեվարքի մէջ է և իվերջոյ պիտի մեռնի։ Բայց թէ երբ, այդ ցոյց կտայ մօտիկ ապագան։

Շատ հաւանական է, որ «Միութիւն և Յառաջադիմութիւն» կոմիտէն մի առ ժամանակ էլ քաշ կտայ իր գոյութիւնը և ապա կընկնի ճանապարհին իր դիակով արգելք լինելով Թիւրքիայի իսկական վերածնութեան գործին։

Թարգ. Գ. Ա.

«Русск. Сл.» № 147 1)

1] Սա ռուս թերթի առաջնորդողն է Ծ. Խ.

---

[1]) Իրաւամբ ձեզ համար Պ. Հ. Առաքելեանն ասել է «Դժոքի և սանտարամեդի թշուառական ու խաւար որդիներ», երբ դուք այդ «մատնիչ» բառը շռայլել էք աջ ու ձախ բոլոր ձեր հակառակորդների դէմ։

[2]) Բացի այդ, հոգ. պ. Ա. Տ. Կարապետեանը Յունիս 2-ին ակտի օրը ինքը բացարձակ ասաց բացի մասին, ուրեմն ինչ թագցնել։

Մի էյրաթի,
Բեր դէյրաթի,
Եւ ամեն ինչ
Կգտնի դինչ։
Դէ, շուտ գնա
Էլ մի մնայ։
— Միամիտ կաց
Ես աթոռից
Չեմ իջնի ցած։—
Եւ լուռ ու մունջ
Պատի մի քունջ,
Կանգնած մնաց։
Արտին գնաց։
Միքիչ յետոյ
Եկաւ Պետոն։
Տեղ չհասած՝
Սէթօն ասաց.
—Եա՛լա դա՛յի,
Գալդ բարի.
Մենք ովլադով,
Մեր միլլաթով,
Քեզ ծառայ ենք.
Եւ կտեսնես
Կծառայենք
Թէ մեր ջանով,
Թէ մեր փողով,
Միայն տունով
Գնա՛ք ժողով։
Այս անգամ էլ
Մենք շատ շատ ենք,
Հեար չի մեր մէջ
Մենք շատ վատ ենք։
Սուրին Նուրին՝
Աչբա հուրին,
Վարդօ Ամին՝
Բախկալ Մամին՝
Մենք տուել ենք
Նրանց գամին։
Կասկած չկայ
Մակար դաշին,
Մեզ հետ է և
Հեաքիմ բաշին,
Ժամ է քերթենք
Նրանց կաշին։
Դէ՛, շտապէ՛ք
Մեծ ճիգ թափէք.
Թէկուզ մերոնց
Կուզէք խաբէք,
Կատարեցէ՛ք
Միակ իղձս։
Տարիներից
Այրուած սիրտս
Չի հովանում.
Ոչ մի բանով
Չի զովանում...
—Էդքան դուսսի
Դու չես դեօզի,
Վերջի վերջոյ
Մի ցաւի էլ՝
Թիւշար կրգաս՝
Մեզ ամենիս
Բադի կրտաս։
Խեղճ ես, բալա,
Մարդ չի լինի
Քամհովսալա։
Սաբը արա.
Դու հէչ աչքի
Մի երևա։
Աստուած մեծ է,
Մեր թշնամուն
Կհարուածէ։—
Այս խօսքերից,
Սէթօն մի քիչ
Ուրախացաւ,
Եւ մոռացաւ՝
Ամեն մի ցաւ։
Ամբողջ վեց ժամ՝
Կարծելով նա
Շատերին խամ,
Որին զոռով՝
Որին խօստմով՝
Ուղարկեց շուտ
Դէպի ժողով։

Ու ինքը լուռ՝
Անկիւնում խուլ,
Մտաւ մի ծակ
Աթոռի տակ,
Եւ սուս ու փուս
Նայում էր դուս՝
Եւ սպասում,
Թէ հէնց մկայ
Մէկը կըգայ,
Եւ կյայտնի
Ցաղթութիւնը
Իրենց կողմիս
Էդ խիալըմ,
Էդ վատ հալըմ,
Իւսուֆ Ամին՝
Պապոզը
Բեզի դամին՝
Տիւր տրտում,
Սէթօ ապուն
Էր պարտում։
Իսկ Արտուշը
Մրթմրթալով՝
Թանգոնաֆաս՝
Գլխին տալով՝
Խեղճ, գլխիկոր,
Օվդաթը թալիս՝
Հոգով դիլիսոռ՝
Շտապ շտապ
Հէնց դուրս եկաւ՝
Թէ չէ իսկոյն
Տուն պուկ եկաւ։
Մեր խեղճ Սէթօն,
Հէնց որ լսեց
Իւսուֆ ամու
Ձէնը դրսից՝
Որ՝ «չանցկացաւ»՝
Բանն հասկացաւ։
Խեղճը հրսից
Արցունք թափեց,
Ջուխտ ձեռքերով
Գլխին բամփեց,
Վիզը ծռած
Ռանգը թռած,
Տուն հեռացաւ
Անիծելով
Իրեն բախտը,
Որ չրթողեց
Բարձրանալու
Սրտին նիսկիլ
Էլած թախտը։

Ֆի՛լ

ՄԵՐ ԳՈՐԾԱԿԱԼՆԵՐՆ ԵՆ

Մահաղում պ. Յ. Տր. Վարդանեանը
Ուրմիում « Ա. Միրզաջանեանը
Աստառում « Ա. Բժշկեանը
Ռէշտում « Մ. Պատմագրեանը
Էնզէլիում « Բ. Մկրտչեանը
Ղազուինում « Ա. Տ. Յակոբեան
Թէհրանում « Պ. Միքայէլեանը
Սպահանում « Ն. Դաւթեանը։

Խնդրում ենք մեր բաժանորդներին շտապեն իրենց բաժնեգները յանձնել վերոյիշեալներին, որպէս առաջ մեզ հասցնելու համար։

Ուրմի.— պրն. Արիստակէս Միրզաջանեանին.- Յունիս 26-ին հեռագրեցինք ձեզ՝ խնդրելով ընդփոյթ հասցնել մեր բաժնեգները։ Խնդրում ենք ջերմ վերաբերմունք մերապառիկներիգանձմանհաստով մեզ առաքման հարցում։

Թաւրիզ.— Շանթին. Կենտրոնական դպրոցի մասին ձեր գրածըկհրատարակենք ըստ հերթի։

Ներկայ 21-րդ համարը բաղկացածէ թերթ ու կիսից։

Խմբագիր-հրատարակիչ՝
Ա. Տ. Վարդանեան

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՓԱՐԻԶ ՄԱԳԱԶԻՆ

Կանացի հագուստի բլուզներ, Եգիպտական էշարփներ և վզկապներ, կանացի քաթանէ կասթիւմներ, Բաթիսթ գոյնզգոյն կտորներ, փէշեր և եուպկաներ, Զանազան արժէքի լիբշիկներ։

Թարմ շվէդական շոկոլադ և բոմբոն։

ԲԱՑՈՒԵԼ Է ՔԱՂԱՔԱՑԻՆ ՀԻՒԱՆԴԱՆՈՑՈՒՄ ԱՏԱՄՆԱԲՈՒԺԱԿԱՆ
բուժարան (լէչէբնիցա)
Արժէքները չափազանց մատչելի են։ Աղքատները բշժկւում են բոլորովին ձրի։ Հիւանդներ ընդունւում են առաւօտեան ժամը 8—1, երեկոյեան ժամը 3—6

ՀԻՄՆԱԴԻՐ ԱՏԱՄՆԱԲՈՅԺ՝ ՄԱՏԻՆԵԱՆ

Յ. ԴԱՂԲԱՇԵԱՆԻ
Ռուս.-Հայ և Հայ.-Ռուս.
ԲԱՌԱՐԱՆՆԵՐԸ
շուտով կստացուին. ցանկացողները դիմեն խժբ-եանս

ԳԱՐՈՒՆ
(ՄԱԳԱԶԻՆ ՄԻՍԱԿ ԲԺՇԿԵԱՆԻ)

Նոր ստացուել են ՄԵՏՐՈՊՈԼԻՏԷՆ ԸՆՏԻՐ ԲԼՈՒԶԵՐՈՒՆԵՐ, ՍՊԻՏԱԿ ԼԵՌ ՔԹԵՆՆԵՐ, տղամարդկանց ԿՈՇՏ ԳԼԽԱՐԿՆԵՐ, ԵՐԿՈՒՏՈՎ ՎԷՐԵՏՆԻԿՆԵՐ, ճաշակաւոր ԳԵԼՈՒՏՈՒԿՆԵՐ, անձեռոցիկներ, երեխաների գլխարկներ և զանազան տեսակի հետաքրքիր խաղալիքներ։
Ընդունելով ԵՂԲԱՐՔ ՍԷՔԼՈՆՈՎՆԵՐԻ ԱՌԵՒՏՐԵԿՈՆ ՏԸՆ ներկայացուցչութիւնը, պատիւ ունիմ յայտարարելու ի գիտութիւն սպառողների, որ ընդունում եմ նոյն ֆիրմայի պատրաստի պալտիրոսների պապիրոսների և ծխախոտների պատէրները։ Պատէրներ կարելի է տալ 50000 հատից սկսած. իրրև կանխավճար վերցնում ենք 100-ին 15 0|0 գները հաշւում ենք գործարանի հաշով, ցանկացողները կարող են վերցնել պրէյսկուրանտ։

ТАВРИЗСКАЯ ГОРОДСКАЯ
Больница

Возобновился амбулаторный и стаціонарный пріембольныхъ, ежедневно отъ 10—12 часовъ.
Бѣдные по запискѣ отъ г. Байларбеги принимаются безплатно

Завѣдующій больницей
докторъ Ваганъ Геворковъ

مریضخانهٔ تبریز

این روزها شروع کرده‌ایم بمعالجه هر قسم مرضای مقیم و غیر مقیم را هر روز پذیرای خواهد شد در مریضخانه از دو ساعت بظهر مانده الی ظهر و مرضای بی‌بضاعت هرگاه از یکلیکی کری نوشته بیاورند مقیم و غیر مقیم مجانی بکمال مواظبت واهتمام معالجه خواهد شد

مدیر مریضخانه دکتر واهان کویرکیان

ԲԱՂՆԻՍ Ա. ՏԷՐ ԳՐԻԳՈՐԵԱՆԻ

Ի գիտութիւն Թաւրիզի յարգոյ հասարակութեան յայտարարում ենք, որ բաղնիսի ջուրը, որ առաջ մատակարարւում էր Ղալա Թաղից, այժմ բերւում է Լիլաւից։

Այն չքաւոր կանայք և աղջիկները, որ առաջ մարդագլուխ վճարում էին չորս աբասի, այժմ մի մի աբասի պակասեցուած է նոցա այդ տուած նախկին արժէքից։ Յաճախողները խիստ գոհ կմնան բաղնիսի մաքրութիւնից և ջրի լաւութիւնից։

ԼՈՅՍ ՏԵՍԱԼ

„ՓՈՐՋ“

Գիտական, Գրական, Գեղարուեստական և Հողվրդական երկամեայ հանդէս, բովանդակութեամբ այլ համարով։ բաժանեցին է տարեկան
Պարսկաստանի համար . . . . 15 զրան
Ռուսաստան „ . . . . 4 ռուբլի

հարկաւոր են գործակալներ. հասցէ Rédaction «Portz» 5, Rue Fonténile-5 Montpellier (France)

Խմբ. Հրատարակիչ՝
Ս. Տէր Բաղդասարեան

ԴՈՔՏՕՐ ՍԱՐԳԻՍԸ

Ամեն ուրբաթ օրերը ժամը 2-ից, կէսօրից յետոյ, ձրի խլում է աղքատների և չքաւորների երեխաների ծաղիկները։